## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար պարբերական հրապարակումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«01» հուլիսի 2019թ
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար.

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հովհաննես Ստեփանյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար.

**Գրիգոր Գաբրիելյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար.

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար.

**Լիլիթ Հովհաննիսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ԸՀ/) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ.

**1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 4-րդ ենթակետով և «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/19» ծածկագրով ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ բաժնով («ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ») նախատեսված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.**

«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ն սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2. Տեղեկատվություն՝ մասնակցի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության վերաբերյալ.**

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ. պարբերությամբ նախատեսված՝ մասնակցի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից եզրակացություն ստանալու նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը ընդմիջել մինչև 2019թ. հուլիսի 01-ը՝ ժամը 15:00-ն, դիմել պատասխանատու ստորաբաժանմանը՝ առաջարկելով մինչև սահմանված ժամկետի ավարտը տրամադրել համապատասխան եզրակացությունը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Սահմանված ժամկետում պատասխանատու ստորաբաժանումը տրամադրել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի՝ «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված

առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

**3. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.**

«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

4. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի մասնակցության իրավունքը և ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1. հաստատել հայտի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից հայտարարել «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ին,
2. հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
3. գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝ Հովհաննես Ստեփանյան

Գրիգոր Գաբրիելյան

Էդգար Տոնականյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Օֆելյա Ասատրյան